

ՀՀ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՏԻՏՈՒՏ

Լ. ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՋԱԶՆՈՒՆԻՆ՝
ԾԱՐՏԱՐԱՊԵՏ

ԵՐԵՎԱՆ 1997

929:72 (499,75) Բարձրագույն



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. ԴՈԼՈՒԻՍԱՆՅԱՆ


ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՉԱԶՆՈՒՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

A II
86352



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	3
Հովհաննես Քաջազնունին՝ ճարտարապետ	5
Կյանքի և գործունեության տարեթվերը	18
Հովհ. Քաջազնունու իրականացրած կառույցները	21
Զրույց Հ. Քաջազնունու հետ	22
Արխիվային նյութեր	23
Հատվածներ Հովհ. Քաջազնունու «Հարյուր տաս օր Եվրոպայում» գրքից (ռուսերեն)	38
Գրականագիտական հոդվածների ցանկը	53
Իլյուստրացիաներ	54



53538
11
A

Հովհաննես Բաջազնունին (1868-1938) հայ ժողովրդի նորագույն պարունության հայրնի դեմքերից է: Անցնելով հասարակական-քաղաքական գործունեության բեղմնավոր ուղի, 1918թ. հունիսին Հայոց Ազգային խորհրդի կողմից նա նշանակվում է Հայաստանի 1-ին հանրապետության 1-ին վարչապետ: Մեծ ջանքեր է գործադրում Հայկական հարցի արդարացի լուծման համար: Այդ նպատակով նա մասնակցում է մի շարք միջազգային հանդիպումների, սերտ կապեր է պահպանում հայ ազգային-ազատագրական պայքարի ակամավոր գործիչներ՝ Անդրանիկ Օզանյանի, Արամ Մանուկյանի, Նուբար փաշայի, Հակոբ Բազրարունու, Սմբար Բորոյանի և ուրիշների հետ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո նա հայրենակներ գործունեություն է ծավալում մեր երկրում անարարապետության զարգացման բնագավառում, քաղաքաշինության մեջ: Նրա գործունեությանը բարձր գնահատական են տվել Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Կասյանը, Ադասի Խանջյանը, Արամայիս Երզնկյանը և այլ պետական գործիչներ:

Հ. Բաջազնունին ուներ անարարապետական փայլուն կրթություն: 1893թ. ավարտելով Պետերբուրգի քաղաքացիական շինարարների ինստիտուտը և սրանախով անարարապետի մասնագիտություն, երկար տարիներ աշխատել է Բաքվում, Բաթումիում, Թիֆլիսում: Նրա նախագծերով մի շարք շենքեր են կառուցվել Հայաստանի քաղաքներում: Ալեքսանդր Թամանյանի, Նիկողայոս Բունիաթյանի և ուրիշների հետ Բաջազնունին նորագույն ժամանակաշրջանի անարարապետներից է: Նրա մասին ուշագրավ տեղեկություններ են տվել հանրապետության շինարարներ՝ Ադոն Ադունյանը, Կարեն Դոլուխանյանը, անարարապետներ Գևորգ Մուշեղյանը, Վարազդար Հարությունյանը և ուրիշներ, որոնք լսել են Բաջազնունու անարարապետական արվեստին նվիրված դասախոսություններ:

Մեծ են Բաջազնունու ծառայությունները Խորհրդային Հայաստանի 1920-30-ական թվականների անարարապետական մշակութային զարգացման գործում: Նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում, շինարարական ինստիտուտում, ստացել

պրոֆեսորի կոչում, զբաղվել է գիրական բեղմնավոր գործունեությամբ: Քաջազունու գրչին են պատկանում մի շարք արժեքավոր հոդվածներ, հուշագրություններ, պատմվածքներ:

1937թ. Հ. Քաջազունին անհիմն հալածանքների ենթարկվելով բանտարկվում է և վախճանվում բանտում: Հեղինակու վերականգնվում է նրա բարի անունը:

Հովհաննես Քաջազունու, որպես հասարակական-քաղաքական և կուսակցական գործչի մասին շարք է գրվել: Ուսումնասիրված չէ նրա գործունեությունը որպես ճարտարապետի: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող, ճարտարապետության թեկնածու Լույս Կարենի Դոլուխանյանի սույն աշխատությունը հեղինակի երկար փորձի և աշխատանքի արդյունք է: Լույս Դոլուխանյանը հեղինակն է ռուսերեն լեզվով 1980թ. լույս տեսած «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը 20-ական քվականներին», «Նիկոլայոս Բունիաթյան», «Ռաֆայել Բարայեյան» և այլ աշխատությունների, որոնք բարձր գնահատականի են արժանացել մասնագետների կողմից: Ժողովրդական ճարտարապետ, ճարտարապետության ակադեմիկոս Զիմ Թորոսյանը, քննադրելով Լ. Դոլուխանյանի բեղմնավոր գործունեությունը ճարտարապետական արվեստի պատմության և տեսության ուսումնասիրության բնագավառում գրել է. «Երկար փորձեր գիրքն ճարտարապետ Լույս Դոլուխանյանին՝ դեռևս ուսանողական փորձից: Նա իր մասնագիտությունը սիրող, նրան նվիրված գիրական աշխատող է, բարձր են գնահատում նրա գործունեությունը, հեղինակական և տրմազան աշխատանքը գիրատեսական ճարտարապետության բնագավառում: Նրա գիրական հետաքրքրությունների շրջանակները լայն են, նա գրել է Երևանի, Գյումրիի և նաև շրջանների ժամանակակից ճարտարապետական հուշարձանների մասին: Ուսումնասիրել առանձին ճարտարապետների, ճարտարապետական ոճական փարթեր ուղղությունների, ճարտարապետական պատմական ժառանգությունների պաշտպանման խնդիրները, արհիվային արժեքավոր նյութեր է հրատարակել»:

Լ. Դոլուխանյանի «Հովհաննես Քաջազունին՝ ճարտարապետ» ուսումնասիրությունը այդ պրոբլեմի հետազոտման առաջին փորձն է և արժանի խրատուման:

Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյան

Հովհաննես Քաջագունու
պայծառ հիշատակին

Քաջագունուհիների գերդաստանը անցյալ դարի ռուս-թուրքական պատերազմներից հետո Էրզրումից տեղափոխվեց Ախալքալակի մարզ: Պապի հայրը՝ Տեր Հովհաննես Իգիթխանյանը, լինելով ուսուցիչ ու քահանա, մեկնեց սբ. Էջմիածին՝ օծվելու: Հայոց կաթողիկոսը ծանոթանալով քահանա ձեռնադրվող բոլոր հավակնորդներին, նրանց առաջարկեց ընտրել նոր անուններ, քվարկելով մոռացության մատնված նշանավոր հայկական տոհմերի անուններ: Տեր Հովհաննեսը թարգմանեց իր իսկ ազգանունը, արժանանալով կաթողիկոսի հավանությանը: Իգիթխանյանների հաջորդ սերունդները կրեցին Քաջագունուհի ազգանունը:

Հովհաննես Քաջագունուհին մեծացավ հոգևորականի և տոհմիկ մտավորականի ընտանիքում, որը նրան դաստիարակեց իբրև ազնիվ քաղաքացու, հայրենասերի, ազգի նկատմամբ պարտքի զգացումով օժտված անձնավորության:

Հովհաննես (Ռուբեն Իվանի) Քաջազնունի ճարտարապետը ոչ այլ որ է, եթե ոչ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետը: Ժամանակի տարաբախտ ընթացքը նրա անունը մատնեց մոռացության թե՛ որպես քաղաքական գործչի, և թե՛ որպես ճարտարապետի: Երկար տարիներ նրա անվան շուրջը լռություն է տիրել: Ճարտարապետ-ուսանողների շատ սերունդներ մույնիսկ չէին լսել Քաջազնունու իբրև ճարտարապետի մասին: Չէ՞ որ նա «ժողովրդի թշնամի» էր, կիսելով 30-ական թվականների բազմաթիվ առաջադեմ գործիչների ու մտավորականների ճակատագիրը:

Քաջազնունու անձնավորության, ճարտարապետի, արվեստագետի, գրականագետի մասին քիչ է գրվել: Նրա նկարագիրը լիարժեք կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ կլինի համախմբել ինչպես պատմաբանի, այնպես էլ գրականագետի, քաղաքագետի ու ճարտարապետի ուսումնասիրությունները: Նրան մոտիկից ծանոթանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն գրական ժառանգությունը՝ քննադատական հոդվածներ, պատմվածքներ, որոնք նա բեղմնավոր կերպով հրապարակել է Պետերբուրգի, Թիֆլիսի մամուլում դեռևս ուսանողական տարիներից սկսած: Քաջազնունու «Հարյուր տաս օր Եվրոպայում» ճանապարհորդական նոթերը լիովին համոզում են, որ մենք գործ ունենք վերին աստիճանի խստապահանջ և նուրբ ճաշակի, բարձր կուլտուրայի տեր արվեստագետի հետ:

Լինելով բազմակողմանի ընդունակությունների տեր անձնավորություն, նա պատանի տարիներին դժվարացել է մույնիսկ կողմնորոշվել որոշակի մասնագիտության ընտրության խնդրում: Սովորելով Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտում (1887), նա սկզբնական շրջանում վստահ չէր իր ընտրած ուղու մեջ, որովհետև մեջ էր՝ ուսումնասիրելով ճարտարապետությունը, միաժամանակ հետաքրքրվել է գրականությամբ: Շեքսպիրը մշտապես նրա ուսումնասիրության առարկան էր: Շեքսպիրին նվիրված նրա հոդվածները բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում նաև մասնագետների համար: Տարիներ անց, Վանում, Քաջազնունին քաղաքական և կառուցողական գործունեությանը զուգընթաց, դասախոսու-

բյուճաններ է կարդացել Շեքսպիրի մասին, զուգահեռաբար ուսումնասիրել ու թարգմանել է քրդական բանահյուսությունը:

Ուսանողական տարիներին Հովհաննես Քաջազնունին շատ էր նկարում, մասնակցում ցուցահանդեսների*, իր գիտելիքները խորացնելով արվեստի ու ճարտարապետության պատմության մեջ: Նա լավագույն ուսանողների շարքում էր, մեծ ապագա խոստացող ճարտարապետի համարում ուներ: Ինստիտուտը գերազանց կերպով ավարտելու կապակցությամբ (1895) Քաջազնունու անունը փորագրվեց ավանդական մարմարե տախտակի վրա:

Նա իր կենսագրության առաջին էջերը բացեց որպես ճարտարապետ, որպես ճարտարապետ էլ ավարտեց իր կյանքը, դառնալով սովետական դաժան հետապնդումների զոհը, վարձահատույց լինելով իր փառապանծ անցյալի համար: Ունենալով միայն մի նպատակ՝ իր ուժերը նվիրաբերել հայրենիքին, 1925-ին Քաջազնունին վերադարձավ Հայաստան, հստակ գիտակցելով, թե ինչ է իրեն սպասում:

Այո, Քաջազնունին ճարտարապետ էր, ընդ որում շատ հետաքրքիր ու յուրատիպ, մեծ հնարավորությունների ու լայն գիտելիքների տեր: Պատահական չէ, որ Ալեքսանդր Թամանյանը ամենատարբեր մասնագիտական հարցերով նրան է դիմել, խնդրելով մասնագիտական եզրակացություններ տալ հանրապետությունում կառուցվող այս կամ այն շենքի վերաբերյալ: Բարեբախտաբար նրա էքսպերտիզաներից մի քանիսը պահպանվել են:**

Եթե Քաջազնունու գործունեությունը սահմանափակվեր միայն ճարտարապետությամբ, ապա այսօր նա կլիներ բազմաթիվ ճարտարապետական ստեղծագործությունների հեղինակ: Յավոք, նրա գործերը բազմաթիվ չեն հենց այն պատճառով, որ ճարտարապետի իր կյանքը նա միահյուսեց շատ ավելի մեծ, մեկ ուրիշ կյանքի հետ: Գարտարապետությունը հայրենիքի զոհասեղանին դրվեց: Նույնիսկ աշխատանքի տեղն ընտրելիս, Քաջազնունին ղեկավար-

* Հայկական ճարտարապետությանը նվիրված նրա նկարները 1891թ. ցուցադրվեցին ուսանողների լավագույն նկարների ցուցահանդեսում՝ նվիրված ինստիտուտի հիմնադրման 25-ամյակին:

**Իր նամակներում և ընդհանրապես կյանքում, Թամանյանը Քաջազնունուն դիմել է որպես Ռուբեն Իվանովիչ, որը շատերին այժմ տարակուսանքի մեջ է գցում և կասկածանքի առիթ տալիս:

վում էր քաղաքական ու հասարակական գործի նպատակահարմարությամբ: Նրա մասնագիտական գործունեությունը անցավ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Հայաստանի շրջաններում, նաև Վանում՝ վտարանդի եղած ժամանակ (1911): Այնտեղ Քաջագունին քաղաքական գործունեությանը զուգընթաց կառուցեց հասարակական շենք: Բաքվում աշխատած տարիներին ճարտարապետը նախագծեց ու կառուցեց Բալախանների շրջանում բնակելի տներ և հյուրանոցի շենք (1899-1906):

Քաջագունու թվով ոչ այնքան շատ գործերը արժեքավոր ժառանգություն են մեր ազգային մշակույթի համար: Գործեր, որոնց մեջ արտացոլվեցին ճարտարապետի աշխարհայացքը, գեղարվեստական մտածելակերպը, բարձր կուլտուրան:

Հովհաննես Քաջագունին ճարտարապետական ասպարեզ մուտք գործեց 20-րդ դ. նախաշեմին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ աշխարհի կառուցողական արվեստում տեղի էին ունենում ոճական փոփոխություններ, կապված գիտատեխնիկական հեղաշրջման հետ: Ճարտարապետները որոնումների մեջ էին: Լայն ծավալ ստացավ էկլեկտիզմը: Երբեմն նույն ստեղծագործության մեջ կարելի էր հանդիպել տարբեր ոճերի զուգորդման: Տարածված էր նաև մեկ, որոշակի ոճով շենքի կառուցումը՝ եգիպտական, հունական, մավրիտանական, կլասիցիստական և այլն: Դրա հետ մեկտեղ, Եվրոպայի ճարտարապետները մերժելով հին ոճերը, փնտրում էին նոր ուղիներ, որոնք խթան կհանդիսանային «տեխնիկայի դարաշրջանի» ճարտարապետության զարգացման համար: Հայ ճարտարապետներն էլ էին ապրում նույն ստեղծագործական մթնոլորտում: Ինչպես մյուս երկրներում, նրանք էլ փորձում էին իրենց ուժերը տարբեր ոճերի մեջ: Այս առումով, միանգամայն հասկանալի է, թե ինչու է ըստ Հովհաննես Քաջագունու նախագծի կառուցված Թիֆլիսի Մայրանա թաղամասում երկհարկանի թեյարանը ուներ պարսկական ոճ:^{*} Այդ տարիների հայ ճարտարապետների ստեղծագործություններում կարելի է հանդիպել էկլեկտիկական, մոդեռն, նեոկլասիցիստական ոճային ուղղությունների հիանալի նմուշներ: Ցավոք, պատմական իրադարձություններն ու պայմանները չեն նպաստել, որպեսզի նրանց մայրաքա-

* Փողոցի լայնացման կապակցությամբ 1967-ին շենքը քանդեցին:

ղաքային հիանալի շենքերը կառուցվեին հայրենիքում: Դրանք շքեղացրին Թիֆլիսի, Բաքվի և այլ քաղաքների կենտրոնները:

20-րդ դարի սկզբին հայկական ճարտարապետական միտքը աշխատել է ազգային նոր ոճ մշակելու ուղղությամբ: Եվրոպական երկրներում տարածում գտած ազգային ռոմանտիզմը, որն օգտվում էր տեղական գեղարվեստական ավանդույթներից, իր արտացոլումը գտավ նաև հայ ճարտարապետների գործերում, ինչպես Հայաստանում, այնպես էլ այն վայրերում, որտեղ ստեղծագործում էին նրանք:

Սրա վկայությունն է Հովհաննես Քաջազունու ճարտարապետական գործունեությունը մինչև 20-ական թվականները և դրանից հետո Երևանում, խորհրդային ժամանակաշրջանում:

Դեռևս ուսանողական տարիներին, երազելով նախագծել հայկական եկեղեցի, նա մեկնում է ուսումնասիրելու միջնադարյան Անին: Նշենք, որ դարասկզբին հայկական ճարտարապետությունը քիչ էր ուսումնասիրված, գրականություն գրեթե չկար: Ինչպես գրում էր ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը, «հայկական ճարտարապետությունը փակ գիրք էր աշխարհի համար»: Հովհաննես Քաջազունին կնոջը՝ Սաթենիկին ուղղված նամակներից մեկում գրում է. «Հայկական ճարտարապետությունը վատ է մշակված, գրականությունը շատ աղքատ է, օգտվելու ձեռնարկներ քիչ են ու անկանոն: Այնպես որ ամեն մի ճարտարապետ պետք է իր համար նյութեր հավաքի»:

Հովհաննես Քաջազունին եկեղեցու նախագիծը մշակում է տարիներ շարունակ, փայփայելով հայկական նոր ոճով մոնումենտալ շինություն ստեղծելու գաղափարը: Գիտակցելով հայկական ճարտարապետության կարողությունները, պահպանելով բարձր գեղարվեստականությունն ու արտահայտման ազգային ձևերը, նա իր առջև խնդիր դրեց ճարտարապետությանը տալ նոր բովանդակություն և ստեղծել «հայկական նոր ոճ, ինչպես 19-րդ դարի կեսերին ստեղծվեց հայ նոր գրական լեզուն»: Քաջազունին տարիների իր իղձերն իրականացրեց նախագծելով հայկական եկեղեցի, որը պետք է կառուցվեր Բաքվի կենտրոնում: Այստեղ այն ժամանակ հիմնականում ապրում էին հայեր, կային նաև ռուսներ ու հրեաներ: Թաթարներն ապրում էին քաղաքի ծայրամասերում

և չէին առնչվում «եվրոպական» քաղաքի բնակչության հետ: Այդ իսկ պատճառով հայկական սրբատեղի ունենալու կարիքը քաղաքում զգացվում էր: Գոյություն ունեցող հայկական եկեղեցին վերափոխումների կարիք ուներ:*

Եկեղեցին կառուցելու համար մեծահարուստ Բուդաղյանը միջոցներ էր կտակել: 1898-ին Պետերբուրգի ճարտարապետների կայսերական ընկերությունը հայտարարեց Բաքվի հայկական եկեղեցու նախագծի առաջին մրցույթը: Մի քանի տարի անց հայտարարվեց երկրորդ մրցույթը: Ներկայացված հինգ նախագծերից երեքի հեղինակները հայտնի են: Զաջազունու նախագծի նոթային նշանաբանն էր՝ «Փառք տեր, Տեր»:

Պետերբուրգում գործող ժյուրին առավելությունը տվեց ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի և Վ. Պետրովսկու նախագծերին, դրանք արժանացնելով առաջին մրցանակի:

Բուդաղյանի ընտանիքի կտակակատարների խորհուրդը կտրականապես դեմ էր ժյուրիի որոշմանը, նախընտրելով Զաջազունու տարբերակը: Սկսվեց նախագծի աշխատանքային գծագրերի մշակումը, որը Զաջազունուն կատարում էր մենակ, առանց որևէ մեկին ներգրավելու աշխատանքին: Մրցույթային տարբերակով եկեղեցու շինարարության արժեքը ենթադրվում էր 300.000 ռուբլի: Բայց այդ նպատակի համար ժառանգած գումարը կազմում էր 200.000ռ. , այդ պատճառով նախագիծը մշակելիս Զաջազունուն զգալիորեն վերափոխեց այն՝ փոքրացրեց չափսերը 1000 մարդու համար, նախագծով նախատեսված 1500 մարդու փոխարեն:

1906-ի սեպտեմբերին, ճարտարապետն իր կնոջն ուղղած նամակում գրում է, որ «Կյուրակի օրը՝ /26-ին - Լ. Դ./ կատարվելու է եկեղեցու հիմքի օժման հանդեսը»: Նախագծային աշխատանքները լրիվ ավարտելուց հետո, 1907-ի օգոստոսի 2-ին սկսեցին սր. Թադևոս ու սր. Բարդուղիմեոս առաքյալների, հայկական մայր եկեղեցու կառուցումը: Շինարարական աշխատանքներին անմիջականորեն հետևելու նպատակով, Զաջազունուն մի ժամանա-

* Տիկնոջը ուղղած նամակում Զաջազունուն գրել է. «Այստեղի հասարակությունը երեկ կանչում էր խորհրդի: Եկեղեցու գմբեքը պիտի քանդեն, նորը շինեն: Ես էլ կանչված էի: Գուցե այդ աշխատանքը ինձ հանձնվի, առանց փողի, ի հարկե՛ ազգային գործ է: Մյուս ամբողջ կոմիսիա է ընտրվել, որի անդամ լինելը ես էլ «պատիվ ունիմ»: 1894թ., 28 մայիսի. Բաքու (ընտանեկան արխիվ):

կավոր փայտե տնակ է կառուցում շինհրապարակում, ամբողջ ժամանակն անցկացնելով շինարարության վրա: Քաղաքական կյանքի իրադարձությունները, սակայն, Քաջազնունուն ստիպեցին որոշ ժամանակ հեռանալ Բաքվից: 1908-ին կատարելով դաշնակցություն կուսակցության հանձնարարությունը, նա մեկնեց Կոնստանդնուպոլիս: 1909-ին քաղաքական գործունեության համար Քաջազնունին ձերբակալվում է և միայն դրամական գրավական վճարելով (10.000ռ.) ազատվում բանտից: 1911թ. նա, խուսափելով դատից, մեկնում է արուսասահման և իբրև քաղաքական վտարանդի ապրում է Ֆրանսիայում, Բելգիայում, որոշ ժամանակ, ինչպես նշեցինք, Վանում: Քաջազնունու բացակայության ժամանակ շինարարությանը հետևում և ավարտին է հասցնում ճարտարապետ Ն. Բակը, որը 20-ական թվականներին եկավ Երևան և իր ստեղծագործական գործունեությունը շարունակեց այստեղ:

Եկեղեցին աչքի էր ընկնում մոնումենտալությամբ: Մալիտակ քարի և ոսկու նուրբ շերտով հարդարման զուգակցումը, արևի ճառագայթների ներքո հատուկ մի վեհություն էին տալիս եկեղեցուն: Ականատեսները վկայում են, որ դա Բաքվի ամենագեղեցիկ շենքն էր, հիացնում էր ներքին ու արտաքին շքեղությամբ, վարպետորեն նկարված ճարտարապետական դրվագներով: Գունավոր վիտրաժե պատուհաններից ներս թափանցող լույսը հարուստ երանգներ էր ստանում: Ճարտարապետական ամբողջ կառույցը ներշնչված էր ոգեղենությամբ: Պատմական հայկական ոճը ստացել էր այստեղ գոթական վերապացություն: Քաջազնունու եկեղեցու ճարտարապետությունը կարելի է դիտել որպես հայ ազգային ոճի նոր, յուրովի մեկնաբանում, և եթե կարելի է այդպես բնութագրել՝ «նոր հայկական գոթիկա»:

Ճարտարապետական տարրեր ոճերի առաջ գալը բնորոշ էր (ինչպես արդեն ասացինք) 20-րդ դարի սկզբի զարգացած երկրներին: Նորին ձգտելու մտածելակերպը, որը արտահայտվեց Հ. Քաջազնունու, Գ. Տեր-Սիբելյովի, Ն. Սիրզոևի, Գ. Զիսլիևի, Ղ. Սարգսյանի և ուրիշների ստեղծագործություններում, հանգեցրեց 1920-ական թվականներին հայկական նոր ոճի և ճարտարապետական նոր դպրոցի ստեղծմանը, որը փայլուն կերպով մարմնավորվեց արդեն Երևանում Ա. Թամանյանի ստեղծագործություն-

ներում: Հ. Քաջազնունու կառուցած եկեղեցու մնացած արտարապետության մեկ օրինակ մենք չունենք, դրանով իսկ այդ շենքը, մաս իր բարձր գեղարվեստական արժանիքներով, պետք է իր ուրույն տեղը գրավի հայ ճարտարապետության պատմության մեջ, չնայած այն բանին, որ նա չի պահպանվել, ինչպես հայկական բազմաթիվ հուշարձաններ:

Եկեղեցին բարբարոսաբար քանդեցին 30-ական թվականների սկզբներին, տեղը կառուցելով կոնսերվատորիայի շենքը: Քանդում էին երեք տարի շարունակ՝ չէր քանդվում: Ստիպված եղան պայթեցնել: Ականատեսները պատմում էին, որ քանդվում էին քարերը, բայց ոչ կարերի տեղերում. այդքան ամուր էր այն կառուցված:

Եկեղեցու շինարարությունը ավարտելուց հետո ճարտարապետը երկար տարիներ չի կառուցել. քաղաքական իրադարձությունները ստիպում էին ամբողջովին նվիրվել դաշնակցություն կուսակցության գործունեությանը:

1918թ. մայիսի 28-ին Քաջազնունին ընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ: Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո սկսվեց նրա վտարանդիի կյանքը՝ Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս, Թուրքիա, վերջում Ռումինիա (Բուխարեստ): Մակայն Քաջազնունին չէր կարող ապրել օտարության մեջ, ձգտում էր վերադառնալ հայրենիք:

Հովհաննես Քաջազնունին Երևան վերադարձավ 1925 թվականին: «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակված հարցազրույցում նա ասում է. «Իմ գալու նպատակը Խորհրդային Հայաստանում աշխատելն է: Ես շատ ջերմ ցանկություն ունեմ աշխատելու Հայաստանի շինարարության մեջ իմ մասնագիտության ասպարեզում»: Մեծ ու նշանակալի եղավ Քաջազնունու դերը երիտասարդ հանրապետության հասարակական և ճարտարապետական կյանքում:

Այդ տարիներին Հայաստանում ծավալվել էր մեծ շինարարություն: Մասնագետների կարիք էր զգացվում կյանքի բոլոր բնագավառներում:

Մասնագիտական կրթությունը ստանալով տարբեր երկրներում, ավագ սերնդի ճարտարապետները եկան հայրենիք շա-

րունակելու իրենց ստեղծագործական կյանքը: Քաջագունուն քարձր պրոֆեսիոնալիզմը և խոր գիտելիքները կարող էին պետք գալ այդ տարիներին: Նա ընդգրկվեց Երևանի համալսարանի նոր կազմավորված տեխնիկական ֆակուլտետի աշխատանքներին, կրթելով ճարտարապետների ու շինարարների առաջին սերունդը: Դասավանդում էր «Շինարարական արվեստ»^{*} և «Ճարտարապետական նախագծում» առարկաները: Լուսժողկոմի կոլեգիայի որոշմամբ 1930թ. Հովհաննես Քաջագունուն շնորհվեց պրոֆեսորի կոչում: Նա հանդիսանում էր նաև Պետպլանին կից տեխնիկական խորհրդի անդամ, որի նախագահը Ալեքսանդր Թամանյանն էր:^{*}

Քաջագունին ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում նաև հանրապետության հասարակական կյանքին: Հայաստանի տեխնիկական ընկերության նախագահության անդամ էր, ապա՝ նախագահ: Անգնահատելի է նրա մասնակցությունը 1928թ. «Շինարարական կառույցների ռուս-հայերեն բառարանի» ստեղծմանը Հր. Աճառյանի, Գ. Հակոբյանի, Ա. Տերյանի համահեղինակությամբ: Այդ բառարանը բաղկացած էր 7560 բառ-հոդվածներից:

Բառարանի ստեղծմանը նախորդեց Ա. Թամանյանի 1924-ի հոկտեմբերի 30-ի միջնորդությունը Հայաստանի ժողկոմխորիի նախագահին, որտեղ ասվում էր. «Մեր տեխնիկական բոլոր դպրոցներում՝ մաթեմատիկական, ֆիզիկական, մեխանիկական և տեխնիկական առարկաները այժմ ավանդում են հայերեն: Ուսուցիչները, սակայն, առ ի չգոյն հայերեն տերմինաբանության, տերմինները քարգմանում են յուրաքանչյուրը ըստ իր հայեցողության ու գիտության, և այդպես էլ սովորեցնում: Հավանորեն այդ տերմինները, որոնք կազմում են տարբեր հիմնարկներում ու զանազան վայրերում, շատ տարբեր, գուցե և անհաջող կլինեն, ուստի և մեր մատաղ սերունդը, կարդալով օտար լեզուներով տեխնիկական գրքեր, բան չեն հասկանա»:^{**}

^{*} Լինելով այդ խորհրդի անդամ, Քաջագունին մեծ ուշադրություն էր դարձնում սնտեսական խնդիրների վրա: Ուշագրավ է նրա աշխատությունը "Об экономичности проведения строительных работ в Армении". - "Экономический вестник ССР Армении", - Ереван, - 1928, - N1, стр.25-31.

^{**} ՀՀ ՆՊԿ ՊԱ, ֆ.112, ց.38, գ.66, ք.1:

Նկատի ունենալով այս հանգամանքը, առաջարկություն է մտցվում կազմել մասն բառարան: Այդ գործում մեծ էր Քաջագունու դերը, տեխնիկական ու գրական գիտելիքների իր մեծ պաշարով:

Լինելով մեծապես գրագետ իր մասնագիտության մեջ, լիովին տիրապետելով ճարտարապետության արհեստի նրբություններին, նա հաճախ էր հրավիրվում հանձնաժողովների աշխատանքներին և տալիս նախագծերի եզրակացություններ: Պատահական չէ, որ նրա գեղեցիկ ստորագրությանը այդքան հաճախ ենք հանդիպում այն թվերի արխիվային ճարտարապետական փաստաթղթերում: Տարակուսելի է միայն, թե ինչու Քաջագունուն, լինելով փայլուն ճարտարապետ, այդ տարիներին ավելի քիչ է գրադվել գործնական նախագծումով:

1926թ. Հովհաննես Քաջագունուն մասնակցեց կառուցվելիք ժողտան (օպերայի և բալետի շենքի) հայտարարված մրցույթին: Նախագիծը, ցավոք, չի պահպանվել:

Քաջագունու նախագծերով և նրա անմիջական ղեկավարությամբ, Երևանում և Սարդարապատում կառուցվեցին բամբակամշակման գործարաններ, ձեթ-օճառի գործարանը Երևանում, իր բոլոր օժանդակ կառույցներով, բնակելի ավան աշխատողների համար: Դրանք կառուցվեցին «Գրախտ» ընկերության կողմից և հանդիսացան Սովետական Հայաստանի առաջին արդյունաբերական շինությունները: Իսկ բնակելի ավանի շինարարությունը գործարանի տարածքի մոտ Հայաստանում առաջին փորձերից է հանդիսանում: Այն հետապնդում է նաև որոշակի նպատակ, աշխատողների բնակեցման շրջանները անմիջականորեն աշխատավայրին մոտեցնելը: Այս միտումը բնորոշ է 20-ական թվականների հայկական ճարտարապետությանը:

Նման ավանների շինարարությունը նախորդեց հետագայում ավելի խոշոր բնակելի թաղամասերի նախագծմանը:

Քաջագունու կառույցներից է Ապարանի շրջխորհրդի երկհարկանի շենքը, որի ծավալի մեջ ընդգրկված են նաև ճաշարան և հյուրանոց:

Տեղյան փողոցի վրա գտնվող Պոլիտեխնիկական իստիտուտի այժմյան ռեկտորատի շենքի հեղինակության հարցը մտորումնե-

րի առիթ է տալիս: Նրա տեղադրումը բուհական քաղամասում որոշված է եղել Թամանյանի կողմից, և նրա հանձնարարությամբ են սկսվել առաջին նախագծային և շինարարական աշխատանքները: Քաջագունու ընտանեկան արխիվում պահպանվել է մի փաստափուղ՝ «Աշխատանքային պայմանագիր» ("Трудовое соглашение"), կնքված 1936 թվականին Ճարտարապետի և այդ դպրոցի պրոռեկտորի միջև (կցվում է): Այն վկայում է, որ շենքի ձախ անկյան շինարարությունը սկսված էր, երբ հարկ եղավ վերանախագծել և շարունակել կենտրոնական մասի և աջ թևի կառուցումը, որը պարտավորվում էր կատարել Քաջագունուն: Ուրիշ մի որևէ փաստաթուղթ չի պահպանվել այդ շենքի վերաբերյալ: Հասցրե՞ց, արդյոք, Քաջագունուն իրականացնել այդ պայմանագիրը՝ մնացել է անհայտ:

Գյումրին մշտապես եղել է ճարտարապետի ուշադրության կենտրոնում, հատկապես 1926թ. երկրաշարժից հետո, երբ քաղաքում ծավալվեց բնակարանային լայնածավալ շինարարություն: Նա հաճախ է եղել այնտեղ, ուսումնասիրել քանդված տների բնույթը, փնտրել շենքերը ճիշտ կառուցելու ուղիներ:

Հետագայում Հովհաննես Քաջագունու նախագծով կառուցվեց բնակելի նոր շենք (1935) նախկին Բուլվարնայա (Կիրովի փող.) և 27-րդ փողոցների խաչմերուկում: Շինության հորինվածքում ընդգրկված է խանութների շարք, որը զբաղեցնում է առաջին հարկը:

Այս կառույցը ցայտուն կերպով դրսևորեց Քաջագունու գեղարվեստական ձգտումները, մտածելակերպը, տաղանդը: Դա ճարտարապետի լավագույն գործերից մեկն է: Ջբաղեցնելով կենտրոնական դիրք քաղաքաշինական բարդ հանգույցում, շենքն ունի կարևոր դեր քաղաքի գեղարվեստական միջավայրը կազմակերպելու, տարածքային ուշագրավ հեռանկար ստեղծելու գործում: Դիտման տեսադաշտը մեծ է. այն տարածվում է տարբեր ուղղություններով և ունենալով անկյունային դիրք, շենքը մի կողմից հանդիսանում է երկու փողոցների կառուցապատման էական տարրը, մեկ այլ իմաստով ներազդում է հրապարակի գեղարվեստական ընկալման վրա:

Կառույցում շեշտված է անկյունային կիսաշրջանաձև մասը հետաքրքիր ուղղահայաց ջլատումներով, որտեղ տեղադրված են

պտտվող սանդուղքներ: Դրանք կառուցվածքի հորինվածքային կենտրոնն են, որտեղից անկյան տակ տարածվում են վաճառքի ընդարձակ ու լուսավոր սրահները: Խանութների գործունեության համար ապահովված են առևտրի բոլոր հարմարությունները: Ներքին տարածություններին (ըստ նախագծի) տրված է մեծ քաղաքային խանութներին բնորոշ տեսք: Բնակարանները (2-3 սենյակից բաղկացած) նախագծվել են այն տարիներին ընդունված նորմերով, բնակարանային շինարարության պահանջներին համապատասխան:

Քաջազմունին մեծ վարպետությամբ է գտել շենքի ծավալատարածական հորինվածք, մասշտաբը: Ճարտարապետությունը համարձակ է, բնույթով էկլեկտիկ:

Նշենք, որ այդ տարիներին Գյումրիում ստեղծագործում էին անվանի ճարտարապետներ Դավիթ Չիսլիև, Ղազար Սարգսյանը, որոնք հայտնի էին Թիֆլիսում կառուցած իրենց շենքերով: Դարի սկզբին այնտեղ իրականացված նրանց ստեղծագործություններն այսօր էլ զարդարում են քաղաքի կենտրոնական մասը: Ճարտարապետները Գյումրի եկան աշխատելու, ունենալով կառուցողական մեծ փորձ ու վարպետություն: Հայտնի են նրանց կառուցած Գյումրիի շենքերը (հրապարակի կինոթատրոնը, տեքստիլագործների քաղամասը, «Չիսլիևի տները» և այլն): Թեպետ այդ կառույցները տարբեր են իրենց ոճական առանձնահատկություններով, բայց բոլորն էլ ներդաշնակ են քաղաքի ընդհանուր կառուցապատմանը: Եվ քաղաքի այս յուրատիպ միջավայրում էր, որ կառուցվեց մի նոր շենք, որն ուներ ճարտարապետական բոլորովին այլ նկարագիր: Իր ոճական լուծումով այն նման չէր քաղաքի որևէ այլ մի շենքի: Ծանոթանալով այս կառույցին, մենք չենք փնտրում որևէ կապ ազգային կամ ուրիշ ճարտարապետությունների հետ, թեպետ ձևերն ու տարրերը հայտնի են ու պարզ: Գյումրիի բնակելի տան գեղարվեստական լուծումը բնորոշ է 20-րդ դարի սկզբի միջազգային ճարտարապետության ոճական որոնումներին:

Շենքի մասշտաբը, առանձին մասերի ուշագրավ համադրությունները նպաստում են ճարտարապետության բնութագրում գերիշխող գեղարվեստականությանը: Իսկ որոշակի էկլեկտիկ բնույթը դառնում է համոզիչ, դիտվում իբրև ինքնատիպ մնուշ:

Շենքի ճարտարապետությունը յուրօրինակ է և դրանով ավելի հետաքրքիր, ինչպես ինքը՝ հեղինակը: Գեղարվեստա-ճարտարապետական և վարպետության հասած ծավալատարածքային լուծումով շենքն այնպես է մտել քաղաքի ավանդական կառուցապատման մեջ, որ թվում է, թե նա դարեր ի վեր կանգնած է եղել այս տեղում: Այն դարձել է քաղաքին հարազատ:

Քաջազնունու այս աշխատանքը հայկական ճարտարապետության լավագույն գործերից մեկն է հայկական ազգային մշակույթի հուշարձանների շարքում: Նշենք նաև, որ այս շենքը այնպես է կառուցված, որ 1988-ի հրեշավոր երկրաշարժից հետո մնաց կանգուն: Այս փաստը կարելի է ընդունել որպես նրա արած գործի հավերժության խորհրդանիշ:


Հովհաննես Քաջազնունու ստեղծագործությանը բնորոշ են բոլոր այն միտումները, որոնք տեղի էին ունենում մեր ճարտարապետության մեջ դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում: Ինչպես բոլոր հայ ճարտարապետների, այնպես էլ նրա գեղարվեստական մտորումներն ուղղված էին ազգային ճարտարապետության նոր ուղիների հաստատմանը:

Քաջազնունին պատկանում էր 20-ական թվականների ավագ սերնդի վարպետների համաստեղությանը, որոնք կանգնած էին ժամանակակից հայկական ճարտարապետության ակունքներում, և որոնց գործունեությամբ էր պայմանավորվել նրա զարգացումը:

Հովհաննես Քաջազնունի ճարտարապետի անցած կյանքը մտորումների առիթ է տալիս: Ռ՞վ գիտե, ինչ կթողներ մեզ Քաջազնունին, եթե նրա կյանքն ընթանար իր սովորական հունով: Բայց Քաջազնունին հայ էր, հայ ճարտարապետ:

Վերջերս մեր պատմությունը նորից հիշեցրեց, թե դա ինչ է նշանակում: Քաջազնունին չէր կարող հանգիստ ստեղծագործել, երբ հայրենիքը վտանգի մեջ էր: Նա անմնացորդ նվիրվեց ժողովրդի ազատագրման գործին: Մենք գիտակցում ենք, թե հանուն ինչի էր նրա զոհաբերությունը: Ռ՞րն էր նախընտրելի: Չէ՞ որ Հովհաննես Քաջազնունին այն գործիչներից մեկն էր, որոնց շնորհիվ ծածանվեց Հայաստանի եռագույն դրոշը:

A II
86352



Հովհաննես Քաջազնունու կյանքի և գործունեության տարեթվերը

Հովհաննես Մաթևոսի Քաջազնունին ծնվել է 1868թ. փետրվարի 1-ին (հին տոմարով), հոգևորականի ընտանիքում:

1877-1886 – Միջնակարգ կրթություն է ստացել մասնավոր պանսի-
ոնատում, հետո՝ հոգևոր ճեմարանում:

1887-1893 – Սանկտ-Պետերբուրգ. քաղաքացիական ինժեներների
ինստիտուտ, ճարտարապետական ֆակուլտետ: Նրա
նկարները 1891-ին ցուցադրվել են ինստիտուտի
25-ամյակին նվիրված ցուցահանդեսում:

Ուսման տարիներին մեկնել է Անի՝ հայ ճարտարա-
պետությունը ուսումնասիրելու և նյութեր հավաքելու
նախագծվող հայկական եկեղեցու համար:

Ջբաղվել է գրականությանը, պատմվածքներ է գրել
և տպագրվել Պետերբուրգի մամուլում:

Ինստիտուտն ավարտել է գերազանց (առաջին կար-
գով):

1895 – Բաբու: Աշխատել է իր մասնագիտությամբ (ընդմի-
ջումներով մինչև 1906թ.) հաստիքից դուրս տեխնիկի
պաշտոնում նահանգապետարանի շին. բաժնում: Բա-
լախանների շրջանում կառուցել է հիվանդանոց և եր-
կու բնակելի տուն՝ աշխատողների համար: Մշակել է
ջրանցքի նախագիծ Բալախանների ջրերը դեպի Կաս-
պից ծովն ինքնահոսով հեռացնելու համար:

1895-1897 – Բաթումի: Դաշնակցություն կուսակցության հանձնա-
րարությամբ աշխատել է որպես Մեծովյան բրիգադի
սահմանապահ զորախմբի կորպուսի վարձու ինժեներ:

1897-1899 – Թիֆլիս: Զաղաքային վարչությունում թաղամասի
ճարտարապետ:

1899-1906 – Բաբու: Նավթագործների համագումարի խորհրդում
աշխատել է որպես ավագ ինժեներ: Հասարակական
աշխատանք է ծավալել նավթագործների շրջաննե-

րում (Բալախանների, Բիրի-Էյբաթի, Սարունչինի):

- 1907 – Բաքու: Սբ. Թադևոս ու սբ. Բարդուղիմեոս հայկական եկեղեցու շինարարության սկիզբը (ավարտվեց 1911): Միաժամանակ Թիֆլիսում: Մասնակցություն դաշնակցություն կուսակցության աշխատանքներին: 1908թ. կուսակցության հանձնարարությամբ մեկնում է Կոստանդնուպոլիս: 1909թ. բանտարկվում է և դատվում Սենատի հատուկ ատյանի կողմից N102 հոդվածով (տաժանավայր): Դատից խուսափելով մեկնում է արտասահման՝ բարեկամ Միրիմյանի անձնագրով:
- 1911-1914 – Քաղաքական վտարանդի (Փարիզ, Բեզգիա, Թուրքիա): Վանում կառուցում է հասարակական շենք, քաղաքական, հասարակական գործունեությանը զուգընթաց դասախոսություններ է կարդում Շեքսպիրի մասին: Ուսումնասիրում քրդական բանահյուսությունը, անում մի շարք թարգմանություններ («Մուսա ու Գյալո Շանհար սարի հետևին», «Ազարների Բուխտանի դեմ», «Ասք Սաֆի Բրախիմի, նրա մոր և կնոջ մասին», «Երգ Խալիի մասին», «Արաբի-ջանե», «Խաչալ» և այլն):
- 1914 – Ռուսաստան: Ապրում է ոչ լեզալ: Քաղաքական գործունեություն:
- 1915 – Թիֆլիս: Քաղբանտարկյալների համընդհանուր կայսերական ազատագրումից հետո զբաղվում է քաղաքական-հասարակական գործունեությամբ: Կովկասյան քաղաքների միության կազմում հանդիսանում էր Հայկական միության խորհրդի անդամ: Հավլաբարի շրջանից ընտրված էր Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասու:
- 1917 – Բաքու: Քաղաքական-հասարակական գործունեություն: Աշխատում էր նավթ-արդյունաբերական ֆիրմաների դեֆիցիտ ապրանքների բաշխողի պաշտոնում:
- 1918 – Թիֆլիս: Քաղաքական գործունեություն: Առաջին կեսը Գեգեչկորիի կաբինետում զբաղեցնում էր հասարակական խնամակալական մինիստրի պաշտոնը և Չխենկելիի կաբինետում մինիստր էր առանց

պարտֆելի:

- 1918-1920 – Առաջին կեսը: Մայիսի 28, 1918-ի, Անդրկովկասյան ֆեդերացիան կազմալուծվելուց հետո ընտրվում է ՀՀ վարչապետ: Երկրորդ կեսը: Կառավարության ու պառլամենտի հանձնարարությամբ գլխավորում է «Հայաստանի տնտեսական օգնության միսիան» Փարիզում:
- 1920 – Հոկտեմբեր, նոյեմբեր: Պառլամենտի նախագահ: Սովետական կարգերի հաստատումից հետո մնում է Երևանում: Աշխատում է ճանապարհների վարչության (Ուշոսդոբ) նախագահի տեղակալ (1921): Բանտարկվում է: Ազատվելով, հեռանում է գործերից: Բոլշևիկների վերադարձից հետո Ջանգեզուրով գնում է Պարսկաստան:
- 1921-1924 – Վտարանդիության տարիներ: (Բաղդատ, 1922 - Բոմբեյ, Եգիպտոս, 1923-24 - Կոստանդնուպոլիս, Բուխարեստ):
- 1925 – Հայաստան: Ընտրվում է ՀՍՍՀ Պետպլանին կից Տեխնիկական խորհրդի անդամ: Աշխատում է բաժնի վարիչ Հայբամբակկոմում (մինչև 1927թ.): Կառուցում է Երևանում և Սարդարապատում բամբակամշակման գործարաններ, կից բնակելի ավաններ, Երևանում ձեթօճառի գործարանը:
- 1926 – Մասնակցում է Երևանում ժողտան մրցույթին: Դասավանդում է Երևանի պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետում:
- 1927 – ՀՍՍՀ Պետպլանի ԵԿՕՍՕ-ին կից Շին-տեխնիկական կոմիտեի նախագահի տեղակալ (մինչև 1931թ.):
- 1928 – «Շինարարական կառույցների ռուս-հայերեն բառարանի» ստեղծումը Հր. Աճառյանի, Հ. Ջարդարյանի, Գ. Հակոբյանի, Ա. Տերյանի համահեղինակությամբ: Հրատարակեց հողված «Հայաստանում շինարարական աշխատանքների անցկացման խնայողականության մասին» Ե., «Տնտեսական լրագրեր», ՀՍՍՀ Հայաստանի Պետպլանի օրգան, 1928թ., N1:
- 1930 – Փետրվարի 9. ՀՍՍՀ Լուսժողկոմատի կոլեգիայի որոշ-

- մամբ շնորհվում է պրոֆեսորի կոչում: Ապարանում կառուցեց շրջգործկոմի, հյուրանոցի շենքերը:
- 1932 – ՀՍՍՀ Կոմունալ տնտեսության ժողկոմիսարիատի խորհրդի գիտ. քարտուղար:
- 1935 – Կառուցեց Գյումրիի բնակելի տունը (Կիրովի փող.):
- 1936 – Վերանախագծեց ու կառուցեց Բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի շենքը Տերյան փող. Երևանում:
- 1937 – Ենթարկվեց ռեպրեսիայի:

Հովհ. Քաջագունու իրականացրած կառույցները

Հիվանդանոցի շենք, երկու բնակելի տուն, երկհարկանի մասնաշենք սպասարկող անձնակազմի համար Բալախանների շրջանում (Բաքու), 1899-1906թթ.:

Հայկական եկեղեցի Բաքվում, 1906-1911թթ. (չի պահպանվել):

Թեյարանի երկհարկանի շենք Թիֆլիսի Մայդանա թաղամասում: 1910-ական թվականներ (չի պահպանվել):

Հասարակական շենք Վանում, 1911-1914թթ.:

Բամբակագտման գործարաններ Երևանում, Արմավիրում, 1927-1929թթ. (չեն պահպանվել):

Չեք-օճառի գործարան Երևանում, 1927-1929թթ.:

Բանվորական ավաններ ձեք-օճառի և բամբակագտման գործարանների բանվորների համար Երևանում, Արմավիրում, 1927-1929թթ.:

Բնակելի շինություններ և բամբակի հումքի պահեստներ «Հայբամբակ» միավորման բոլոր շրջաններում, 1927-1929թթ.:

Շրջխորհրդի շենք՝ հյուրանոցով և ճաշարանով Ապարանում, 1930թ.:

Բնակելի տուն խանութներով Գյումրիում, 1935թ.:

ՉՐՈՒՅՅ Հ. ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ՀԵՏ

(«Խորհրդային Հայաստան», 1925թ., 23 հունվարի, N17)

Հունվարի 19-ին Թիֆլիսից տեղ հասավ «Դաշնակցությունն անելիք չունի այլևս» գրքի հեղինակ և նախկին դաշնակցական կուսակցության նախագահ Հ. Քաջազունին: Արմենտասի աշխատակցի այն հարցին, թե ի՞նչն է Ձեր Հայաստան գալու նպատակը, քաղ. Քաջազունին պատասխանել է, ես շատ ջերմ ցանկություն ունեմ աշխատելու Հայաստանի շինարարության մեջ իմ մասնագիտության ասպարեզում:

Իր տպավորությունների մասին Խորհրդային երկրներից քաղ. Քաջազունին հայտնել է. «Պետք է ասեմ, որ ընդհանուր առմամբ իմ տպավորությունները Խորհրդային երկրից շատ լավ են, սրտապանդիչ: Մանրամասնորեն չեմ կարող իմ տպավորությունները հայտնել, որովհետև Ռուսիիայում Խորհրդային թերթերի մուտքը խստիվ արգելված է, իսկ Թիֆլիսում ընդամենը մի ամիս եմ ապրել, ուր ամբողջովին զբաղված եմ եղել տարիներ շարունակ երեսնիվայր թաղված ընտանեկան գործերով»:

Դառնալով արտասահմանի հայության՝ քաղ. Քաջազունին շարունակեց. «Ես հաստատապես կարող եմ ասել, որ ընդհանրապես արտասահմանի հայության վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը համակրական է: Սակայն Հայաստանին նյութական օժանդակություն ցույց տալու հարցում ես կազմել եմ այն դառը համոզումը, որ արտասահմանի հայությունն իրական օգնություն անել մեզ չի կարող: Գաղութահայերի մի ահագին մեծամասնությունը գաղթականներ են, որոնք օգնության կարիք ունեն և եթե ցանկանան էլ՝ ի վիճակի չեն որևէ զոհողություն անել: Իսկ այն չնչին բարեկեցիկ մասն այնքան խորթացած է հայրենիքից, որ ամենաչնչին հոգեկան պահանջ անգամ չունի որևէ զոհաբերության: Սա իհարկե անկախ նրանից, թե ինչ պետական վիճակ է տիրում այստեղ՝ Խորհրդային, թե մի այլ: Նրանց արտասահմանում բառերի մեջ օգնության կարելի է հանդիպել, իսկ գործնականում բնավ:

Մեկ ու կես տարի առաջ դուրս գալով Դաշնակցությունից՝ կուսակցական կապեր չունեմ նրա հետ, սակայն բավական վստահորեն կարող եմ հայտարարել, որ դաշնակցական զանգվածների

մեջ ժխտողական կամ անհանդուրժող վերաբերմունք դեպի Խորհրդային իշխանությունը չկա: Այդ կուսակցության ղեկավարի մեջ կա բացասական վերաբերմունք, որը սակայն շարունակվում է ինքնօրինակ ուժով, բայց այդ վերաբերմունքն ևս տեղի է տալիս ավելի գիտակից ու խելացի վերաբերմունքի:

Մի երևույթ, որ ակնբախ կերպով նկատվում է գաղութահայության մեջ, դա ընդհանուր և շատ բուռն ցանկությունն է Հայաստան վերադառնալ: Ես գիտեմ, որ եթե մի փոքր հնարավորություն լինի ներկա Հայաստանում, տասնյակ հազարավոր հայեր կվերադառնան: Սրա պատճառը ոչ միայն հայրենասիրությունն է, այլ այն նյութական և քաղաքական անհանդուրժելի վիճակը, որի մեջ ապրում են փախստական հայերը:

Այդ գաղթականների մեծագույն մասը, սակայն, իր սոցիալական էությանը Հայաստանի համար այնքան էլ օգտակար չէ: Նրա մի որոշ մասը, որ գյուղատնտեսությամբ է պարապում, գուցե պետք լինի Հայաստան բերել, իսկ լևանգական քաղաքացիների բնակիչներ դառած և սոսկ առևտրով պարապող հայերն օգուտ տալ չեն կարող Հայաստանին: Նրանցից արդեն բավականաչափ կան Հայաստանում և չարժեն նրանց թիվը մեծացնել»:

ՀՄԽՀ Պետական
համալսարան

СССР Государственный
университет

N 1368

"3" մարտի 1930թ.

Ընկ. Քաջագնություն

Հայտնում եմ Ձեզ ի գիտություն, վոր Հայպետհամալսարանի վարչության ս.թ. փետրվարի 6-ի վորոշումը՝ Ձեզ պրոֆեսորի կոչում տալու մասին, Լուսժողկոմատի կոլեգիայի ս.թ. փետրվարի 9-ի նիստի վորոշմամբ (արձանագրություն N 9), հաստատված է:

Տեղֆակի ղեկան
Քարտուղար

/Նավակատիկյան/
/Շատվորյան/

ընդհանրական արխիվ

ТРУДОВОЕ СОГЛАШЕНИЕ

1936 г. марта "8" дня, г.Ереван

